***Խաղաղ, այդ թվում՝ քաղաքական հավաքներին, երեխաների մասնակցության պահանջների հակիրճ վերլուծություն***

Նախընտրական քարոզչությանն ակտիվ ներգրավվում են տարբեր տարիքի երեխաներ և որոշ դեպքերում արձանագրվում են երեխաների լավագույն շահերին հակասող իրավիճակներ:

Այս մասին են փաստում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ուսումնասիրություններն ու մշտադիտարկումը:

Նախ, խաղաղ հավաքներին, այդ թվում՝ քաղաքական, երեխաների մասնակցության արգելք գոյություն չունի: Կարևոր նշանակություն ունի խաղաղ հավաքներին կամ այլ զանգվածային միջոցառումներին երեխայի մասնակցության, երեխայի կարծիքի ազատ արտահայտման իրավունքների պատշաճ ապահովումը:

Այնուամենայնիվ, հավաքներին երեխաների մասնակցության հարցը դիտարկելիս անհրաժեշտ է առաջնորդվել երեխաների լավագույն շահերին առաջնահերթ ուշադրություն դարձնելու հրամայականով՝ հաշվի առնելով կոնկրետ իրավիճակները:

Պետք է միշտ նկատի ունենալ երեխայի լավագույն շահերը՝ որպես բացարձակ արժեք և այն, որ դրանցով չառաջնորդվելը երեխայի իրավունքների խախտում է:

Գոյություն ունեն խաղաղ հավաքներին մասնակցելու երեխայի իրավունքի միջազգային պայմաններ, ինչպիսիք են երեխայի տեղեկացված մասնակցության սկզբունքը, իր տարիքին և հասունությանը համապատասխան երեխայի հայացքների նկատմամբ պատշաճ ուշադրությունը, ծնողների, խնամակալների և օրենքով երեխայի համար պատասխանատու այլ անձանց (օրինակ՝ դպրոցում գտնվելու ընթացքում այդպիսի պատասխանատվություն է կրում դպրոցը՝ տնօրենի գլխավորությամբ) կարևոր դերակատարությունն ու պատասխանատվությունն իր իրավունքներն իրականացնելիս երեխային ուղղություն տալու, նրա անվտանգությունը և հիմնարար իրավունքների իրացումն ապահովելու հարցում և այլն: Երեխայի իրավունքների իրացումը որևէ դեպքում չի կարող ինքնանպատակ լինել. այն պետք է ուղղված լինի հասարակական կյանքին երեխայի լիարժեք և գիտակցված ներգրավվածության ապահովմանը, որը ծառայում է երեխայի լավագույն շահերին:

Օրինակ՝ ԵԱՀԿ համեմատական ուսումնասիրությամբ արձանագրված է, որ երեխաների ակտիվ մասնակցությունը հաճախ շահագործվում է խաղաղ հավաքների կազմակերպիչների, ինչպես նաև ծնողների կամ խնամակալների կողմից, որոնք իրենց համաձայնությունն են տալիս երեխաների մասնակցության համար: Հաճախ հաշվի չեն առնվում այն երկարաժամկետ հետևանքները, որոնք կարող են առաջանալ երեխաների համար քաղաքական բնույթ ունեցող հավաքներին նրանց ներգրավելու դեպքում, ինչպիսիք են, օրինակ, թիրախավորումը, բուլլինգը, խտրականությունը: ԵԱՀԿ ուսումնասիրությամբ նաև արձանագրված է, որ նման բացասական հետևանքները հնարավորինս բացառելու, ինչպես նաև այսպես կոչված «հուզական քվեարկություն» ապահովելու համար քաղաքական գովազդային արշավներում երեխաներին ներգրավելու մանիպուլյատիվ ներուժը զսպելու նպատակով անհրաժեշտ է հաշվի առնել այն սկզբունքը, որ երեխաները պետք է պաշտպանված լինեն այնպիսի իրավիճակներից, երբ նրանք քաղաքական կուսակցական գործունեության, հատկապես՝ ընտրարշավների ընթացքում քաղաքական գործիչների կողմից «օգտագործվում են» որպես «զարդարանք» իրենց քարոզչությունն իրականացնելու համար: Երեխաները չպետք է նախընտրական շրջանում քաղաքական կուսակցությունների կողմից կազմակերպվող միջոցառումներին ներգրավվեն որպես «ֆոն» (նստած, կանգնած կամ այլ եղանակով):

Այս կապակցությամբ գոյություն ունեն հետևյալ միջազգային պահանջները. Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի՝ մինչև 18 տարեկան երեխաների ու երիտասարդների մասնակցության մասին հանձնարարականով ամրագրված սկզբունքներից են՝

1.երեխաների բովանդակային և իրազեկված մասնակցությունն ապահովելու նպատակով նրանց համապատասխան տեղեկատվությամբ ապահովելու անհրաժեշտությունը.

2.իրենց տեսակետն ազատորեն արտահայտելու իրավունքն իրացնող երեխաների՝ հնարավոր վտանգավոր հետևանքներից, այդ թվում՝ սպառնալիքներից, վրեժխնդրությունից, ինչպես նաև անձնական, մասնավոր կյանքի իրավունքի խախտումներից, պաշտպանվածությունն ապահովելը.

3.երեխաների կողմից իրենց մասնակցության շրջանակի, ներառյալ՝ ներգրավվածության հետ կապված սահմանափակումների, մասնակցության ակնկալվող և իրական արդյունքների վերաբերյալ մշտապես լիովին տեղեկացված լինելն ապահովելը:

Բացի այդ, «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 12-րդ հոդվածի վերաբերյալ Ընդհանուր մեկնաբանության համաձայն՝ երեխայի լսված լինելու իրավունքի ապահովմանն ուղղված բոլոր գործընթացները պետք է լինեն թափանցիկ, տեղեկատվական, կամավոր, հարգալից, անվտանգ, ներառական (ոչ խտրական), երեխայակենտրոն միջավայրում, ռիսկերի նկատմամբ զգայուն, ինչպես նաև հաշվետու:

ԵԱՀԿ ուսումնասիրությամբ արձանագրված է՝

1. քաղաքական կուսակցությունները պարտավոր են հնարավորինս զերծ մնալ քաղաքական գովազդային արշավներում երեխաներին, հատկապես՝ մինչև 8 տարեկան երեխաներին ներգրավելուց, քանի դեռ խնդիրներն ակնհայտորեն կապված չեն նրանց հետ.

2. երեխաների լուսանկարները, որոնք օգտագործվում են քաղաքական գովազդային արշավներում, հնարավորինս պետք է վերցվեն ֆոնդային լուսանկարներից՝ խուսափելու համար հնարավոր մակնշումից, բուլլինգից և ցանկացած այլ բացասական ազդեցությունից.

3. բոլոր քաղաքական գովազդային նյութերը, որոնցում ներգրավված են երեխաներ, պետք է ստուգվեն նախքան պատասխանատու մարմնի կողմից ցուցադրվելը: Մասնավորապես, լրատվամիջոցների համակարգողը պետք է իրականացնի մանրակրկիտ, սպառիչ և պարտադիր բնույթ ունեցող ստուգման գործընթաց.

4. քաղաքական կուսակցությունները և քաղաքական թեկնածուները պետք է լրացնեն մանրամասն և համապարփակ համաձայնության ձևաթուղթ՝ ստորագրված ոչ միայն երեխաների ծնողների կամ խնամակալների, այլ նաև այն երեխաների կողմից, որոնք թերթերում, գովազդային վահանակներում, հեռուստատեսությունում և այլ եղանակով մտադիր են ներգրավվել քաղաքական գովազդային արշավներում: